



## «NAIRI SPORT» ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Խմբագրություն՝ խմբ. ՆՍ01  
(Ակտիվի դաս՝ հրապարակային)

### 1. ԾՐԱԳՐԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ

«NAIRI SPORT»-ն առաջարկում է դժբախտ պատահարներից ապահովագրություն սպորտով զբաղվող 6-55 /ներառյալ/ տարեկան անձանց համար:

### 2. ԱՊԱՀՈՎԱԳՐՎՈՂ ԱՆՁԻՔ

Ծրագրի շրջանակներում կարող են ապահովագրվել՝

- Մարզական դպրոցների աշակերտները
- Մարզիկները, ովքեր մասնակցում են մրցումների կամ սահմանված գրաֆիկով հաճախում են մարզական պարապմունքների
- Պրոֆեսիոնալ մարզիկները, ում համար սպորտը եկամտի հիմնական աղբյուրն է
- Մարզիչները

### 3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԾԱԾԿՈՒՅԹ

Ծրագիրը ընձեռնում է ապահովագրական պաշտպանություն՝

- Մարզական պարապմունքների ընթացքում
- Մարզական մրցումների ընթացքում
- Մարզական միջոցառումների ընթացքում՝
  - ՀՀ և ԼՂՀ տարածքում անցկացվող
  - Արտերկրում անցկացվող

### 4. ԱՊԱՀՈՎԱԳՐՎՈՂ ՌԻՍԿԵՐ

«NAIRI SPORT»-ի շնորհիվ մարզիկն ապահովագրված է դժբախտ պատահարի արդյունքում առաջացած հետևյալ ռիսկերից՝

- *մարմնական վնասվածքներ և կոտորվածքներ*
- *աշխատունակության մշտական կորուստ*
- *Մահ*

Ապահովագրական հատուցումներն իրականացվում են հետևյալ սահմանաչափերով՝

- *մարմնական վնասվածքների և կոտորվածքների դեպքում՝ բժշկի ցուցումով փաստացի կատարված բժշկական ծախսերի չափով, բայց ոչ ավել, քան ապահովագրական գումարի 50%-ը*



- Հաշմանդամության 1-ին խմբի ձեռքբերման դեպքում՝ Ապահովագրական գումարի 100%-ի չափով,
- Հաշմանդամության 2-րդ խմբի ձեռքբերման դեպքում՝ Ապահովագրական գումարի 75%-ի չափով,
- Հաշմանդամության 3-րդ խմբի ձեռքբերման դեպքում՝ Ապահովագրական գումարի 50%-ի չափով,
- Մահվան դեպքում՝ Ապահովագրական գումարի 100%-ի չափով:

## 5. ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓԱԹԵԹՆԵՐ

|            | Ապահովագրական գումար<br>/ՀՀ դրամ/ | Տարեկան ապահովագրավճար<br>/ՀՀ դրամ/ |                     |                     |
|------------|-----------------------------------|-------------------------------------|---------------------|---------------------|
|            |                                   | Ռիսկային խումբ<br>1                 | Ռիսկային խումբ<br>2 | Ռիսկային խումբ<br>3 |
| Տարբերակ 1 | 500,000                           | 6,000                               | 8,000               | 9,000               |
| Տարբերակ 2 | 750,000                           | 10,000                              | 12,000              | 13,500              |
| Տարբերակ 3 | 1,000,000                         | 13,000                              | 15,500              | 18,000              |

## 6. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ

Ապահովագրության պայմանագիրը կարող է կնքվել՝

- 1 տարի ժամկետով
- մինչև 1 տարի ժամկետով

Ապահովագրության պայմանագիրը 1 տարուց պակաս ժամկետով կնքելու դեպքում կիրառվում են հետևյալ կարգավորող գործակիցները

|             |      |
|-------------|------|
| մինչև 30 օր | 20%  |
| 31-60 օր    | 30%  |
| 61-90 օր    | 40%  |
| 91-120 օր   | 50%  |
| 121-150 օր  | 60%  |
| 151-180 օր  | 70%  |
| 181-210 օր  | 75%  |
| 211-240 օր  | 80%  |
| 241-270 օր  | 85%  |
| 271-300 օր  | 90%  |
| 301-330 օր  | 95%  |
| 331-366 օր  | 100% |



## 7. ՄԱՐԶԱԶԵՎԵՐ

|                                |  |
|--------------------------------|--|
| <p><b>Ռիսկային խումբ 1</b></p> | <p>Բազկամարտ, Բադմինտոն, Վազք և քայլք, Բիաթլոն, Բիլիարդ, Ջրային պոլո, Գեղարվեստական մարմնամարզություն, Դարթս, Քյորլինգ, Կինոլոգիական սպորտ, Դահուկավազք, Լող, Ռադիոսպորտ, Չկնորսական սպորտ, Սինկրոն լող, Սքվոշ, Սպորտային կողմնորոշում, Պարեր, Թենիս, Սեղանի թենիս, Ֆիթնես աերոբիկա, Սուսերամարտ, Շախմատ, Շաշկի, Էսթետիկ մարմնամարզություն</p>   |
| <p><b>Ռիսկային խումբ 2</b></p> | <p>Թիավարություն, Ակրոբատիկ ողջնող, Բասկետբոլ, Բեյսբոլ, Հեծանվասպորտ, Ջրադահուկային սպորտ, Վոլեյբոլ, Հանդբոլ, Թեթև աթլետիկա, Առագաստանավային սպորտ, Լեռնադահուկային սպորտ, Սքեյթբորդինգ, Եռամարտ, Ժամանակակից հնգամարտ, Ծանր աթլետիկա, Դահուկային երկամարտ, Ջրացատք, Բատուտի վրա ցատկ, Սոֆթբոլ, Սպորտային տուրիզմ</p>  |
| <p><b>Ռիսկային խումբ 3</b></p> | <p>Ավիացիոն սպորտ, Ավտոսպորտ, Ալպինիզմ, Սպորտային մարմնամարզություն, Բոբսլեյ, Բոնցքամարտ, Ծանրամարտ, Գոտեմարտ, Ազատ ոճի ըմբշամարտ, Հունահռոմեական ոճի ըմբշամարտ, Չյուդո, Կարատե, Կոմպլեքս մենամարտ, Ձիասպորտ, Մոտոցիկլային սպորտ, Ռաֆթինգ, Ռագբի, Սամբո, Սնոուբորդ, Սումո, Թեքվոնդո, Ուշու, Գեղասահք, Ֆուտբոլ, Ամերիկյան ֆուտբոլ, Հոկկեյ, Փեյնթբոլ, Քարթինգ, Ստորջրյա սպորտ, Նետաձգություն, Հրաձգություն</p> |

## 8. ԾՐԱԳՐԻ ԸՆԶԵՌՄԾ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«NAIRI SPORT»-ը տալիս է հնարավորություն ունենալու՝

- ✓ Պաշտպանություն ցանկացած սպորտաձևով զբաղվելու ժամանակ
- ✓ Պաշտպանությունն արտերկրում անցկացվող մրցումների ժամանակ

*Ծրագիրը կարգավորվում է Ընկերության «Դժբախտ պատահարներից ապահովագրության պայմաններ»-ով:*